ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ /ԻՆՏՐԱՆԵՏ/ ՑԱՆՑԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/ՈՍ/2022/ՃՈ

ք. Երևան «17» 02 2022թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՎ&Գ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ներքին ծառայողական /ինտրանետ/ ցանցի ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը** կազմում է **22 000 000** (քսաներկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 01.01.2022թ-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
ՀՀ Ֆինանսների նախարարության	<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 25000105200110
Հ/Հ 900011024321	ՀՎՀՀ 03004979
ՀՎՀՀ 01840082	հեռ.010-20-81-72
հեռ. 59-64-86	էլ. փոստ: Info@fvg.am
էլ. փոստ: police_gnumner@police.am	
_____ Վ. Մովսիսյան	_____ Վ. Դազարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	/տնօրեն/
(ստորագրություն)	
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2
<<17>> << 02>> 2022թ. կնքված
ՀՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/ՈՍ/2022/ՃՈ գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	32411140/1	Ներքին ծառայողական /ինտրանետ/ ցանց		4 400 000	4 400 000	9 900 000	9 900 000	9 900 000	15 400 000	15 400 000	15 400 000	22 000 000	22 000 000	22 000 000	**22 000 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024321
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-64-86
էլ. փոստ: police_gnumner@police.am

_____ Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
հեռ.010-20-81-72
էլ. փոստ: Info@fvg.am

_____ Վ. Ղազարյան
/տնօրեն/
Կ.Տ

Հավելված 1
<< 17 >> << 02 >> 2022թ կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/ՈՍ/2022/ՃՈ գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց

Ծառայության								
Հ/Բ	Անվանումը և CPV-կոդը ըստ գնումների պլանի	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը /հազար դրամ/	Ընդհանուր գինը /հազար դրամ/	Ընդհանուր քանակը	Մատուցման	
							Հասցեն	Ժամկետը*
1	2	3	4	5	6	7	8	9
1	ՀՀ Ո ՃՈ տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական ներքին ծառայողական /ինտրանետ/ ցանցի սպասարկման ծառայություն **CPV կոդը – 32411140/1**	Ըստ հավելված 1 և 2	դրամ	22 000,0	22 000,0	1	ք. Երևան Ծովակալ Իսակովի 9	

** Ծառայության մատուցումը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը,մինչև ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային Ոստիկանության տվյալների փոխանակման Համակարգչային ներքին գերատեսչական /ինտրանենտ/ ցանցի սպասարկման

Կապուղիների սպասարկում

Ստորաբաժանման տեսակ	Քանակ	Աշխատանքներ
Կենտրոնական ապարատ (Երևան, Իսակովի 9)	1	Հիմնական և պահուստային կապուղիների սպասարկում
Գումարտակներ (Երևան, Թաիրովի 14)	1	
ՀՔԲ-ներ	13	
2-րդ Գումարտակի վաշտեր (Գավառ, Գյումրի)	2	

Ցանցի սպասարկում

Սպասարկման միջավայր	Քանակ	Աշխատանքներ
Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանց	1	Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանցի ընդհանուր սպասարկում, այդ թվում՝ • Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանցի համակցում ՀՀ Ոստիկանության գերատեսչական ցանցի հետ (հասցեավորում և երթուղում, որոշ ստորաբաժանումների համար ընդհանուր աբոնենտային երթուղիչ); • Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանցի միացման կազմակերպում այլ գերատեսչությունների հետ (կառավարություն, կենտրոնական բանկ և այլն); • Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանցի տեխնիկական փաստաթղթերի պատրաստում և պարբերաբար թարմացում; • Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանցի զարգացման վերաբերյալ խորհրդատվություն և նոր նախագծերի պատրաստում • Ճանապարհային ոստիկանության գերատեսչական ցանցում պարբերաբար պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացում
Կենտրոնական Ապարատ (Երևան, Իսակովի 9)	1	• երթուղիչի հիմնական պարամետրերի կարգաբերում • անվտանգության մեխանիզմների կիրառում (մատչելիության աղյուսակների, գաղտնաբառերի և կառավարման համար անվտանգ

Գումարտակներ (Երևան, Թաիրովի 14)	1	
ՀՔԲ-ներ	13	• արձանագրությունների կիրառում) • կապի համակցում կապի ծառայություն մատուցող ընկերության
2-րդ Գումարտակի վաշտեր (Գավառ, Գյումրի	2	• հետ (VLAN-ների, կապի տեսակի և արագության ուղղությամբ) • VPN մեխանիզմների կիրառում • հիմնականից պահուստային և հակառակ ուղությամբ կապուղիների անցման մեխանիզմների ներդրում • ցանցային սարքավորումների ծրագրային ապահովումների (IOS) պարբերարաբար թարմացում: • 24/7 սխեմայով սարքավորումների կառավարում և դիտարկում • անսարքությունների դեպքում երթուղիչների նորոգում կամ փոխարինում նոր սարքերով,թողունակությունը առնվազն 20 մբ/վ:
Անշարժ պահակակետ	3	
Վաշտեր (ոստ. Բաժնի կամ ՀՔԲ-ի հետ համատեղ)	38	• Երթուղիչի՝ վաշտին միացրած ինտերֆեյսի հիմնական պարամետրերի կարգաբերում • Անվտանգության մեխանիզմների կիրառում վաշտին միացրած՝ երթուղիչի ինտերֆեյսի վրա (մատչելիության աղյուսակների կիրառում) • 24/7 սխեմայով վաշտերի ինտերֆեյսների կառավարում և դիտարկում • անսարքությունների դեպքում միացման ինտերֆեյսի փոխարինում

Կառավարումը և սպասարկումը ընդգրկում են հետևյալ հիմնական աշխատանքները	
Ցանցի վերակառուցման և զարգացման նախագծի ստեղծում (արքավորումների նորացում	
ըստ նոր նախագծի)	
ցանցային հանգույցների մոնիտորինգ	
պատահարների գրանցում և վերլուծություն	
ցանցի տարբեր հատվածներում գերբեռնվածության ախտորոշում,	

ցանցային բոլոր ենթակառուցվածքների (կապուղիների, սարքավորումների) մոնիտորինգ	
պահուստային կապուղիների անցման մեխանիզմների կառուցում և վերահսկում	
ցանցային կառուցվածքի փոփոխություն՝ ըստ կապուղիների ենթակառուցվածքի	
ցանցային անվտանգության միջոցառումների իրականացում, վերահսկում և փոփոխում	
Երևան քաղաքի տարածքում գտնվող ստորաբաժանումներում ողջամիտ պատճառներով	
առաջացած խնդիրները պետք է լուծվեն ոչ ուշ քան 5 ժամվա ընթացքում:	
ՀՀ մարզերում գտնվող ստորաբաժանումներում՝ ողջամիտ պատճառներով առաջացած խնդիրները պետք է լուծվեն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում	
ՃՈ ստորաբաժանումների հասցեները կցվում են, հավելված 2-ի	

Ց ՈՒ Ց Ա Կ

ՃՈ ստորաբաժանումների

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՑԵՆ	ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐ
1	Վարչական մաս	Ք.Երևան, Ծովակալ Իսակովի 9	010-58-59-94
3	Ուղեկցող սպայական ջոկատ	Ք.Երևան, Թաիրովի 14	011-54-65-96
4	ՊՀՎ ՎԳ բաժանմունք	Ք.Երևան, Թաիրովի 14	011-54-41-31
5	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ /Հրամանատարություն/	Ք.Երևան, Թաիրովի 14	011-52-90-99
6	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ 1-ին վաշտ	Ք. Էջմիածին, Կամոյի 15, Ք. Արտաշատ, Շահումյան 20 Ք. Վեդի, Մուրադ Խաչատրյան 32/1	0231- 5-33-93 0235 2-36-00 0234 2-38-39
7	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ	Ք. Գյումրի Ռուսթավելի 22/2 /ՃՈ հերթապահ մաս/ Ք. Աշտարակ Տիգրան Մեծի 46 Ք. Թալին Մ. Գորկու 14 Ք. Ապարան Գայի 9	0312 5-80-02 0312 5-85-02 0312 5-11-92 0232 3-17-71 0249 2-24-55 0252 2-53-60

8	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ 3-րդ վաշտ	Ք. Աբովյան Զորավար Անդրանիկի 5 Ք. Եղվարդ Շիրակի 2 Ք. Հրազդան Զորավար Անդրանիկի 1	022 2-00-27 0222 2-23-06 0224 2-24-34 0223 2-33-61
9	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ 4-րդ վաշտ	Ք.Սևան Լճաշեն խաչմերուկ Ք. Իջևան Երևանյան 13 Ք. Գավառ Սայադյան 91 Ք. Մարտունի Մյասնիկյան	0261 2-20-01 263 4-02-35 0264 2-23-60 0262 4-16-76
10	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ 5-րդ վաշտ	Ք. Վանաձոր Լոռու 1 և Թումանյան 3 Գ. Գուգարք 1-ին փ. Շ.8 Ք. Նոյեմբերյան Բարեկամության 4 Ք. Ստեփանավան Ս.Սարգսյան 37 Ք. Սպիտակ Ալեք Մանուկյան 1	0322 2-22-66 253 2-27-11 0322 5-59-65 0266 2-23-97 0256 2-25-30 0255 2-01-05
11	ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ 6-րդ վաշտ	Ք. Եղեգնաձոր Նիկոյան 18 Ք. Կապան Երկաթուղայինների 4 Ք. Ջերմուկ Մյասնիկյան 3 Ք, Վայք Երիտասարդական 2/2 Ք. Սիսիան Գ. Նժդեհի 6 Ք. Գորիս Նարեկացի 3 Ք. Մեղրի Զորավար Անդրանիկի 10	0281 2-24-51 0281 2-49-79 0285 5-20-59 0287 2-10-50 0282 9-28-89 0283 2-46-56 0284 2-60-44 0286 4-29-92

12	Երևանի ՀՔԲ	Ք. Երևան, Գաջեգործների 76	010 45- 09- 90
13	Կապանի ՀՔԲ	Ք. Կապան, Արզումանյան 128բ	0285 5-25-25
14	Գորիսի ՀՔԲ	Ք.Գորիս Երևանյան խճ. 17 /վարձակալված/	0282 2-37-77
15	Վայքի ՀՔԲ	Ք. Եղեգնաձոր, Երևանյան խճ. 3/2 /վարձակալված/	091 00-87-00
16	Արտաշատի ՀՔԲ	Ք. Մասիս 3 փող.շենք 31	0236 4-14-00
17	Արմավիրի ՀՔԲ	Արմավիրի մարզ, Նորապարտ համայնք 5 փող. 3-րդ նրբ. 3	0237 5-01-44
18	Գյումրու ՀՔԲ	Ք. Գյումրի Լիսինյան 1	0312 5-37-84
19	Աշտարակի ՀՔԲ	Ք. Աշտարակ Ն,Աշտարակեցու 5	0232 3-27-08
20	Կոտայքի ՀՔԲ	Կոտայքի մարզ գ. Նոր Գյուղ 1-ին փող. 7/1 շենք	093 06-99-99
21	Սևանի ՀՔԲ	Գեղարքունիքի մարզ, Վարսեր-Լճաշեն խաչմերուկ	0261 2-41-31

22	Մարտունու ՀՔԽ	Ք. Մարտունի Մյասնիկյան 100/1	0262 4-31-39
23	Իջևանի ՀՔԲ	Ք.Իջևան Վասիլյան 3/վարձակալված/	093 41-31-44
24	Վանաձորի ՀՔԲ	Ք. Վանաձոր Լոռվա 1	0322 2-30-28

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ,,ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ,, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
2-ՐԴ ՍՊԱՅԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Ստորաբաժանումը	Տեղակայման վայրը	Սպասարկման տարածքը
1	1-ին վաշտ, 1-ին դասակ	Ք. Էջմիածին, Կամոյի 15	Արմավիրի մարզ
2	2-րդ դասակ	Ք. Արտաշատ, Շահումյան 20	Արարատի մարզ
3	2-րդ վաշտ, 1-ին դասակ	Ք. Աշտարակ, Տիգրան Մեծ 46	Արագածոտնի մարզ
4	2-րդ դասակ	Ք. Գյումրի, Ռուսթավելու 2/2	Շիրակի մարզ
5	3-րդ վաշտ, 1-ին դասակ	Ք. Կոտայք, Զորավար Անդրանիկի 5	Կոտայքի մարզ
6	2-րդ դասակ	Ք.Հրազդան, Զորավար Անդրանիկի 1	Կոտայքի մարզ
7	Ծաղկաձորի ջոկ	Ք.Ծաղկաձոր Սարալանջի 5	Կոտայքի մարզ
7	4-րդ վաշտ, 1-ին դասակ	Սևան-Գավառ-Լճաշեն խաչմերուկ	Գեղարքունիքի մարզ
8	2-րդ դասակ	Ք. Իջևան, Երևանյան 13	Տավուշի մարզ

9	5-րդ վաշտ, 1-ին դասակ	Ք. Վանաձոր, Լոռվա 1	Լոռու մարզ
10	2-րդ դասակ	Ք. Նոյեմբերյան, Բարեկամության 4	Նոյեմբերյանի տարածաշրջան
11	6-րդ վաշտ, 1-ին դասակ	Ք. Եղեգնաձոր, Միկոյան 18	Վայոց Ձորի մարզ
12	2-րդ դասակ	Ք. Գորիս, Նարեկացու 3	Սյունիքի մարզ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024321
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-64-86
Էլ. փոստ: police_gnumner@police.am

Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
հեռ.010-20-81-72
Էլ. փոստ: Info@fvg.am

Վ. Ղազարյան
/ տնօրեն/
Կ.Տ

Հավելված3
ՀՀֆինանսներինախարարի
2017 թվականիհուլիսի 18-ի
N 356-Նհրամանի

«Հավելված
ՀՀֆինանսներինախարարի
2017 թվականիմայիսի 20-ի
N 230-Նհրամանի

Պայմանագրիկողմ

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ _____

ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմքընդունելովպայմանագրիկատարմանվերաբերյալ

« » « » 20 թ. դուրսգրված N _____հաշիվ-ապրանքագիրը,

կազմեցինսույնարձանագրությունը

հետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարելէհետևյալաշխատանքները, կամմատուցելէհետևյալծառայությունները, կամմատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների, կատարվածաշխատանքների, մատուցվածծառայությունների							
	անվանումը	տեխնիկականբնութագրիհամառոտշարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/
			ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի		

Սույնարձանագրությաներկկողմհաստատմանհամարհիմքհանդիսացածհաշիվապրանքագիրընդրականեզրակացությունընհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասը նկցվումեն:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված3.1
« » 2022թ. կնքված
ծածկագրովպայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն